# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N 163-Ա**

**« 22 » ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.**

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի օգոստոսի 7-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» թիվ 817-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստի № 1 արձանագրությունը՝

**Որոշում եմ**

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ Վայոց ձորի մարզում անտառային և խոտածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:

2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Աշխատանքային խմբին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մարզի անտառածածկ և խոտածածկ տարածքներում իրականացնել ուսումնասիրություններ և վեր հանել առկա խնդիրները:

4. Աշխատանքային խմբի անդամներին՝ մեկշաբաթյա պարբերականությամբ, յուրաքանչյուր հինգշաբթի ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել առկա խնդիրները, դրանց լուծման համար առաջարկվող ուղիները և տեղեկատվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ամփոփել ստացված տեղեկատվությունը և ներկայացնել Վայոց ձորի մարզպետին և ՀՀ ՆԳՆ ՓԾ համապատասխան ստորաբաժանմանը:

6. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

8/22/2023

X

ԱՌԱՔԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

**Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ք.Եղեգնաձոր**